Ես երեսս լոացել, վերջացրել էի, այժմ սանդրւում էի:

— Տեսնեմ այդ սանդրը, — ասաց նա, ձեռքը մեկնելով:

Այդ սանդրը ընծայել էր ինձ ընկերներիցս մէկը, կիսալուսնի ձեւ ունէր եւ շինուած էր գոմէշի սեւ եղջիւրից: Ծովիկը հիացմունքով նայում էր նրա վրայ եւ անդադար շրջշրջում էր իր մանրիկ ձեռքերի մէջ:

— Հաւանո՞ւմ ես:

— Շա՛տ սիրուն է:

— Ա՛ռ, թող քեզ լինի:

— Բայց դու առանց սանդրի կը մնաս:

— Քաղաքումը մի ուրիշը կը գնեմ:

— Չէ, լաւ կը լինի, որ փոխենք իմ սանդրի հետ:

— Շատ լաւ կը լինի:

— Բայց իմը կոտրած է, անշնորհք է:

— Թող կոտրած լինի, բայց քո սանդրը ինձ համար շատ...

Նա թոյլ չտոեց ինձ խօսքս վերջացնել, տոեց ինձ իր սանդրը, գլուխը բարեկամաբար շարժելով ժպտաց, վեր առեց սափորը եւ վազեց դէպի տուն:

Պատանու եւ աղջկայ մէջ այսպիսի փոխարինութիւնը կարող էր բոլորովին այլ նշանակութիւն ունենալ, բայց պարզամիտ Ծովիկը չհասկացաւ. նա միայն ուրախ էր, որ գոհացրեց ինձ եւ ինքը գոհ մնաց:

Ծովիկը մի զարմանալի աղջիկ էր երեւում ինձ: Որքան արդիւնաւոր կարող էր լինել, եթէ գիւղական աղջկայ այդքան աշխոյժը, այդքան կենդանութիւնը գործ դրուէր ուրիշ, աւելի օգտաւէտ կրթութիւնների մէջ: Մի այդպիսի խելացի աղջիկը կարող էր հրաշքներ գործել:

Երբ ես վերադարձայ սրահը, բոլորը պատրաստ էին ճանապարհ ընկնելու: Ասլանը մի քանի րոպէով մտաւ այն սենեակը, որտեղ գտնւում էր հիւանդը եւ մեզ սպասել տոեց:

Մենք եկանք նաւահանգիստը այն ժամանակ, երբ բաւական լուսացել էր, եւ աղօթարանը սկսել էր շառագունել: Նաւաստին մօտեցաւ ցցին, որից կապուած էր նրա նաւակը եւ, բռնելով պարանից՝ կոչեց.

— Դէ՛, մօտ եկ:

Նա այնպէս էր կանչում իր նաւակին, որպէս ձիապանը իր սնուցած նժոյգին: Նաւակը մօտեցաւ եզրին: Նա մի ոստիւնով ցատկեց նաւակի մէջ, որը բաւական հեռու էր կանգնած: Յետոյ ձայն տոեց Ծովիկին.